

ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

1991 թվականի մայիսի 5-ին, կիրակի օրը, Մեծի Տանն Կիլիկիո Տ. Տ. Գարեգին Բ Վեհափառը, բազմահազար հայ ուխտավորների ներկայությամբ, օծումը կատարեց Տեր-Զոր քաղաքում վեր խոյացած «Սրբոց Նահատակաց» եկեղեցու: Նվիրական սրբավայր դարձած այս ուխտատեղին այդ օրը տասնյակ հազարավոր հայորդիների ուխտի և աղոթքի էր հավաքել սրբաբագործյալ և մեռոնաբույր «Սրբոց Նահատակաց» եկեղեցու կամարների տակ: Այդ օրը լեցուն էր նաև վերածննդի ու վերազարթոնքի շունչով, քանզի Տեր-Զորի Նահատակաց արյունով սրբագործված հողի վրա հառնող «Սրբոց Նահատակաց» համալիրը խորհրդանիշն էր վերապրող ու հարատևող հայ ժողովրդի:

Սրբազան ուխտագնացությանը Մայր Աթոռ Ս. Էջմիածնից Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա Հայրապետի նվիրակներն էին գերշ. Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանը, գերշ. Տ. Գյուտ արքեպս. Նագաշյանը և Տ. Մամիկոն աբղ. Քիլեճյանը:

Ահավասիկ, համազգային ուխտի ու ոգեկոչման այս նվիրական արարողություններից մեկ ամիս անց, Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Գարեգին Բ-ը, անսալով Ամենայն Հայոց Հայրապետի հրավերին, սույն թվականի հունիսի 8-ին ժամանեց Մայր Աթոռ Ս. Էջմիածին:

Նորին Սրբություն Գարեգին Բ-ը Ս. Էջմիածին էր ժամանել իբրև ուխտավոր՝ բերելով Տեր-Զորի մահաշունչ անապատում ունեցած իր հոգեկան ապրումները՝ կիսելու Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի ու հայ ժողովրդի զավակների հետ, որպեսզի էլ ավելի ամուր մնա այն անտեսանելի կապը, որ Մայր Հայրենիքը անքակտելի շղթայով միացնում է Տեր-Զորի հետ:

Այդ օրը Մայր տաճարը լեցուն էր հավատացյալների բազմությամբ: Իջման ս. սեղանի առջև Ամենայն Հայոց Հայրապետը՝ շրջապատված Մայրավանքի միաբաններով, սպասում էր բարձրաստիճան հյուրին: Եվ ահա մեքենաների շարասյունը կանգ է առնում Տրդատադռան մոտ: Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսը, հընթացս օրհնելով ժողովրդին, «Հրաշափառ»-ով առաջնորդվում է Մայր տաճար, ուր երկու Հայրապետները ողջագուրվում են և բարիգալստյան սրտառուչ խոսքեր ասում միմյանց:

Այս բացառիկ առիթով Հայոց Հայրապետն իր խոսքն ուղղելով Գարեգին Բ Կաթողիկոսին ասաց.

ՎԱՉԳԵՆ Ա ԵՎ ԳԱՐԵԳԻՆ Բ ՀԱՅՐԱՊԵՏՆԵՐԸ ՋԵՐՄ ԶՐՈՒՅՑԻ ՊԱՀԻՆ
ՎԵՀԱՐԱՆԻ ՄՈՒՏՔԻ ԱՌՋԵՎ

(21 հունիսի 1991 թ.)

Գարեգին Բ. Կաթողիկոսը Եղեգնաձորի շրջանի Սպիտակավոր եկեղեցու մոտ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԲԱՐԻԳԱԼՍՏՅԱՆ ԽՈՍՔԸ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

Վերստին հոգեկան մխիթարություն ունենք այս պատմական ս. տաճարի կամարների ներքո ընդունելու Ձեր այցելությունը: Այս անգամ, սակայն, պահը չափազանց հուզիչ է և անկրկնելի, որովհետև դուք գալիս եք Տեր-Զորից. այնտեղ, ուր նահատակվեցին հարյուր հազարավոր մեր ժողովրդի զավակներ՝ 1915—1916 թթ.: Եվ որոնց աճյունների վրա բարձրացավ կառույցը այն եկեղեցվո և համալիրին, որ կոչվում է Սրբոց Նահատակաց տաճար կամ եկեղեցի: Եվ որի օծումը դուք կատարեցիք Ձեր ձեռքով մայիսի 5-ին կիրակի օր:

Անձամբ ես չկարողացա, ցավոք, ներկա լինել այդ հիշատակելի արարողության: Ուղարկեցի իմ ներկայացուցիչներին, որոնք իրենց վերադարձին պատմեցին և ցույց տվին նաև այն տեսաժապավենը, որով մենք տեղյակ դարձանք, թե ինչպիսի փառավոր պայմանների մեջ, բազմահազար հայ հավատացյալների ներկայությամբ տեղի ունեցավ այդ անմոռանալի արբազան արարողությունը:

Դուք գալիս եք հիմա ողջույնը բերելու Ձեր այդ նորակառույց և նորաօծ ս. տաճարից: Բերում եք անշուշտ նաև վկայությունը կատարված մեծ ողբերգության՝ 1915 թ., բերում եք նաև վերանորոգված Ձեր ուխտը՝ հավատարիմ մնալու նրանց երազանքներին, բերում եք նաև տեսիլքը Եզեկիելյան՝ հայ ժողովրդի մեր օրերի ազատ վերածննդյան:

Մենք ներկա չեղանք անձնապես այնտեղ, բայց ես վստահեցնում եմ, որ թե՛ ես անձնապես, թե՛ մեր միաբանությունը, չեմ սխալվում, եթե ասեմ համայն հայ ժողովուրդը, հոգևին ներկա էր Ձեզ հետ այդ սքանչելի պահին: Հետ այսու կարծում եմ համայն հայ ժողովրդի համար ուխտատեղի պետք է հռչակվի Տեր-Զորի նահատակաց հուշարձան եկեղեցին, և ամեն հայ, ուր էլ ապրելիս լինի՝ Հայաստանում կամ Սփյուռքում, հոգևին պետք է ուխտի գնան այդ տաճարին վերանորոգելու համար իրենց հոգևոր և ազգային գիտակցությունը: Կարծում եմ, որ ամեն հայ կամ ամեն հայ խմբավորում, որը կանգնած պիտի լինի պատմական ճանապարհի վրա մի բախտորոշ հանգրվանի, իր վերջնական վճիռը, որոշումը տալուց առաջ, իր վերջնական ուղին գտնելուց կամ որոնելուց առաջ, պետք է ուխտի գան Տեր-Զորի այդ տաճարին, որպեսզի ուղիղ գտնեն իրենց ապագա կյանքի ճանապարհը:

Այս հույզերով, խորապես հուզված ողջունում ենք Ձեր ժամանումը Մայր Աթոռ, Ձեզ և Ձեր ընկերակից երկու արբազան եպիսկոպոսներին: Ինձ այնպես է թվում, որ այս պահուն կարծեք թե ես էլ Տեր-Զոր մի պահ ներկա գտնվեցի:

Բարի եկաք, Ասված թող օրհնի Ձեր ժամանումը և մեր այս հանդիպումը, և առաջնորդի մեզ Ս. Հոգով. ամեն:

Պատասխան խոսքում Գարեգին Բ Կաթողիկոսը, դիմելով Ամենայն Հայոց Հայրապետին, ի մասնավորի ասաց.



Գարեգին Բ Կաթողիկոսը Գլաձորում

ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԱՐԵԳԻՆ Բ-Ի ԽՈՍՔԸ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

Ամենասիրելի և թանկագին Վեհափառ եղբայր,

Կխորհիմ Ձեր խոսքերը ունկնդրելե ետքը մանավանդ, որ եթե այսօր ես չգտնվեի Սրբություն Սրբոց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի այս սրբատեղիին մեջ, իմ ուխտագնացությունը դեպի Տեր-Զոր ամբողջականորեն իր իմաստը գտած պիտի չըլլար: Որովհետև Տեր-Զորը մեզ բոլորիս համար մեր ժողովրդի պատմության հետ շաղախված վայր մըն է, և այնտեղ պարտականություն կատարել հանդեպ նահատակներուն, բայց չգալ նահատակներու հայրենիքը, ամբողջականորեն և գեղեցկագույն արտահայտությամբ հարգանք ընծայել չէ, որովհետև մեր արմատներն այստեղ են, անոնց կյանքն այստեղեն կսկսի և անոնց սերունդներուն կյանքը այստեղ պիտի շարունակվի: Հետևաբար բնական պարտք զգացի, մանավանդ որ Ձեր եղբայրական քաղցը հրավերն ալ եկավ ուղղվելու դեպի մայր հայրենիք՝ դեպի Ս. Էջմիածին և անձամբ Ձեզի հետ բաշխելու այն հոգեկան ապրումները, որոնք մերը եղան, Ձեր ներկայացուցիչներունը եղան և հազարավոր հայ ժողովրդի զավակներունը եղան, որոնք բախտավոր առիթն ունեցան այնտեղ գտնվելու: Վեհափա՛ռ, կըսեմ բախտավոր, որովհետև ես ալ եթե երբեք աչքերովս տեսած չըլլայի, եթե ֆիզիկական գոյությամբս այնտեղ չըլլայի, պիտի չունենայի այն խոր կերպարանափոխիչ հոգեփոխությունը, որու մեջեն անցանք բոլորս: Երբ կտեսնեք անապատը, երբ կտեսնեք այդ անապատին մեջ մեր ժողովուրդին անցքին տեսքը և հետո կտեսնեք այնտեղ գացող հազարավոր ժողովրդի առույգ կեցվածքը, հավատարիմ վերաբերումը և ուխտագնացական ճանապարհորդությունը, այն ատեն մարդ ըլլալ և չազդվիլ անկարելի բան է:

Վեհափառ Տեր,

Անհունորեն շնորհակալ եմ: Եկած եմ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության անունով, մեր միաբանության անունով, մեր ազգային կենտրոնական վարչության անունով շնորհակալություն հայտնելու Ձեզ, որ Դուք Ձեր լայնասիրտ և քաղցր հոգիով ուղարկեցիք Ձեր ներկայացուցիչները: Եկած եմ վկայելու այստեղ, որ Տեր-Զորի մեջ կենդանի կերպով, ուժեղագույն ներկայությամբ մեզ հետ էր Ամենայն Հայոց Կաթողիկոսությունը, Ս. Էջմիածինը, հայրենիքը և հայ ժողովուրդը: Այնտեղ պետք էր ըլլար տեսնելու համար, թե ժողովուրդը ինչ մեծ սիրով և գուրգուրանքով նայեցավ Ձեր ներկայացուցիչներուն վրա: Անոնց անձերուն մեջեն Հայաստանն էր, որ կուգար իրենց, Ս. Էջմիածինն էր, որ անգամ մը ևս կմարմնանար իրենց հոգիներուն մեջ: Հիշեցինք Ձեզ. Ձեր նվիրած խաչով օրհնվեցավ այդ ժողովուրդը: Երգեցինք Ս. Էջմիածնի շարականը, լսեցինք Ձեր խոսքը և գոտեպնդվեցանք այս բոլորով: Եվ եկած եմ նաև մաղթելու, որ առողջ մնաք, երկար ապրիք և այս իմաստուն հայրախնամ հոգածությունը մեր ժողովրդի վրա տանե երկար տարիներ՝ վասն բարյաց ազգիս հայոց:

Վեհափառ Տեր,

Թույլ տվեք նաև ըսելու, որ այս վայրկյանիս երբ կգտնվիմ Ս. Էջմիածնի մեջ, եկած եմ նաև ողջունելու մեր հայրենի ինքնիշխան պետության բոլոր նվաճումները, բոլոր դրական գործունեությունները. անոնք տակավին Հայաստանի Հանրապետության տարին չլրացած՝ արդեն իրենց նվիրվածությամբ նոր հույս բերին մեր ժողովրդին, կողջունեմ բոլոր այն դրական իրագործումները, որոնք մեր ապագայի հաշվույն ներդրումներ են: Թող

Աստված օրհնե մեր պետությունը, օրհնե մեր հայրենիքը և թող հայրենիքն ալ ու Հայաստանի ժողովուրդն ալ զգա, որ Ս. Էջմիածնի կողքին Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսությունը Ձեզի հետ է, Ձեզի հետ պիտի ըլլա ու Ձեզի հետ պիտի մնա հավետ:

Գարեգին Բ Կաթողիկոսի շքախմբի մաս էին կազմում գերշ. Տ. Սուրեն արքեպս. Գաթարոյանը, գերշ. Տ. Զարեհ եպս. Ազնավորյանը և գավազանակիր Տ. Բաբկեն վրդ. Զարյանը:

ԿԻՐԱԿԻ, ՀՈՒՆԻՍԻ 9

Այսօր Մայր տաճարի դարավոր ու խնկաբույր կամարների տակ հավատացյալ հայորդիների հոծ բազմությունը աղոթքի և խոկման պահ է ապրում: Բոլորն անհամբեր սպասում են պատարագի սրբազան արարողությանը: Պատարագիչն է Մեծի Տանն Կիլիկիո Գարեգին Բ Վեհափառը:

Առավոտյան ժամը 11-ին եկեղեցական թափորը, պատարագիչ Հայրապետը, Մայրավանքի զանգերի քաղցրահունչ ղողանջների ներքո, Վեհարանից առաջնորդվում է Մայր տաճար: Նորին Սրբությունն իր օրհնությունը բաշխելով հավատավոր ժողովրդին բարձրանում է Ավագ խորան: Ս. պատարագի ընթացքում հնչում է Եկմալյան պատարագի գեղեցիկ երգեցողությունը և պատարագիչ Հայրապետն օրհնություն ու խաղաղություն է բաշխում ժողովրդին:

Տերունական աղոթքից առաջ Գարեգին Բ Կաթողիկոսը իր հայրական սլատգամն ու հորդորն է հղում հավատացյալ բազմությանը.

ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԱՐԵԳԻՆ Բ-Ի ՔԱՐՈԶԸ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ (9 հունիսի)

Սիրելի Վեհափառ եղբայր, սիրելի հոգևոր եղբայրներ և հավատացյալ ու հավատարիմ զավակունք ազգիս հայոց և Եկեղեցվույս Հայաստանյայց:

Սրտիս խորքերեն գոհություն և փառք կընծայեմ Աստուծո անգամ մը ևս, որ ինձի շնորհք ըրավ, որ կյանքիս ամենեն կարևոր դրվագներեն մեկեն ետքը, ես առիթն ունենամ իմ առաջին պատարագս մատուցելու միածնաէջ այս խորանին վրա, մեր հայրենի հողին սրտին վրա՝ Ս. Էջմիածնի կամարներուն ներքև: Բոլորդ ալ գիտեք, տեղեկացաք, որ ասկե ճիշտ ամիս մը առաջ, մայիսի 5-ին, մենք ուխտի գացինք մեր ժողովուրդի ներկա պատմության համար նվիրականագույն մեկ սրբավայր դարձած տեղը, այն տեղը, որուն անվան հիշատակությունն անգամ սարսուռ կպատճառե ամեն մեկ գիտակից և անկեղծ հայուն՝ Տեր-Զոր մահվան խորհրդանիշ, մեր ժողովուրդի նոր Գողգոթայի ճանապարհ: Այնտեղ մեր ժողովուրդի անունով ներկայացանք Աստուծո առջև և իր Ս. Հոգու շնորհքովը և Ս. Մեռոնի օծությամբը օծեցինք նորակառույց և այժմ «Սրբոց նահատակաց» կոչված եկեղեցին, կատարեցինք բացումը նահատակներու հիշատակին, անոնց զոհողության հոգիին իբրև զանգակատուն բարձրացած հուշարձանային այն

համալիրին, որ պատիվ կբերե հայ ժողովուրդի նոր զավակներուն՝ իբրև հավատարմության պարտքը հանդեպ նահատակներուն և անոնց Ս. Կտակին:

Վեհափառ Տեր, մեզի համար հոգեկան մեծ բերկրանք եղավ, զորացում դարձավ Ձեր ներկայացուցիչներու մասնակցությունը այդ սրբազան արարողության: Դուք մեզի հետ էիք: Պարագաներն այնպես բերին, որ Դուք չկարողացաք ներկա ըլլալ անձնապես, բայց Ձեր ներկայացուցիչներու միջոցավ, Ձեր խոսքին միջոցավ, Ձեր այնտեղ նվեր ուղարկած, Ձեր սրտի ընծա խաչին օրհնությամբը ժողովուրդը զգաց Ձեր և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և հայրենիքի ներկայությունը իր կյանքի մեջ:

Վերջին տասնամյակներում Տեր-Զորը կորսնցուցած էր այլևս իր հոգեկան ազդեցության ուժը մեր ժողովուրդի կյանքին մեջ: Բայց մի անապատ, ուր ավելի քան վեց հարյուր հազար հայ հողին խառնվեցան, ուրիշ հողից տարբեր է մեզ համար: Տարբեր է, որովհետև մեր հայրերուն և մայրերուն հոգեղեն ներկայությունն ունի իր մեջ, ներշնչողական ուժ ունի իր մեջ, կյանք մը տալու գաղափարին շեփորը կդառնա այդ հողը գիտակից և ունկընդիր զգայուն հայ մարդուն համար: Ուրիշ ազգեր պանթեոն կկանգնեն իրենց մեծ ու նշանավոր անձերուն համար, որոնք իրենց տաղանդով, իրենց գրիչով ու արվեստով իրենց ազգի կյանքի գանձանակն են ճոխացուցած: Իսկ մենք Տեր-Զորի մեջ պանթեոն մը կանգնեցինք ոչ թե նահատակներուն արվեստը հավերժացնելու համար, այլ իրենց արյունը, իրենց կյանքն ազգին տված մեկ ու կես միլիոն նահատակներուն համար՝ հանուն հավատքին, հանուն Աստուծո, հանուն ազգի և հանուն անմահության:

Ահա թե ինչու, Վեհափառ եղբայր, Ձեր հրավերին ընդառաջելով մենք այստեղ եկանք, որպեսզի տակավին Տեր-Զորին փոշին մեր ոտքեն չթոթափած, գանք և մեր ուխտը կատարենք այստեղ Ս. Էջմիածնի մեջ: Որովհետև կխորհիմ, թե գաղտնի ճամփա մը կա Տեր-Զորեն դեպի Հայաստան: Անոնց՝ մեկ ու կես միլիոն նահատակներուն զոհողության իմաստը Հայաստանով է, որ կարժևորվի: Եվ մասնավորաբար հիմակվան Հայաստանով: Ինչպես այնտեղ՝ Տեր-Զորի մեջ ըսի, այստեղ կկրկնեմ, այս տարվեն ետքը ոչ մեկ տեղ, իմ խոնարհ զգացողությամբ, ոչ մեկ տեղ ապրիլ 24-ը կրնա տոնվիլ այնպես, ինչպես կտոնվեր այս տարիեն առաջ՝ նախկին տարիներուն: Որովհետև մենք ապրեցանք և կշարունակենք ապրիլ մեր նոր բացված արդի պատմությունը: Դա հայ ժողովուրդի սրտին, մտքին, կամքին գերագույն և հարազատագույն արտահայտությունը եղող Հայաստանի Հանրապետության հռչակումն է: Օգոստոսյան հռչակումը, որպես շարունակությունը 1918-ի մայիս 28-ով հռչակված մեր Հայաստանի՝ անկախ Հայաստանի: Այլևս ապրիլ 24-ը ուրիշ իմաստ ունի: Մեր աչքերը սևեռված են, ուղղված են դեպի մեր երկիրը: 70 տարիներու բռնակալ վարչակարգե մը ետքը, ինքնիշխան, ինքնակամ, ազգընտիր պետություն ունենալը, արևածագի պես ողջունելի երևույթ է: Եվ հետևաբար Տեր-Զորի նահատակությունը նոր լույս զգեցավ Հայաստանի Հանրապետության հռչակումով: Այնտեղ ուխտ կատարեցինք հավատարիմ գտնվելու նահատակաց հոգիին, զոհողության գաղափարին, հայրենիքի ազատության և հայ ժողովուրդի երազի իրականացման համար, դա Հայաստանի Հանրապետության՝ անկախ հանրապետության ստեղծումն է:

Ես լավ գիտեմ, որ դժվար օրերու մեջեն կանցնիք, և բնական կգտնեմ այդ: Այս ժամանակաշրջանը, որ կապրինք մենք հիմա, պատասխանատվու-

թյան, գերագույն պարտքի կկոչե մեզ՝ բոլորս, և ադոր համար, երբ այսօր ս. խորանեն անդրանիկ պատարագս կմատուցեմ կերպարանափոխված Հայաստանի հողի վրա, ողջույնի խոսքս կուղղեմ մեր հայրենիքի ինքնիշխան պետության, և կողջունեմ այդ պետության իրագործումները, բոլոր դրական արարմունքները դեպի անկախություն գացող այդ ճանապարհին վրա և կօրհնեմ անոնց աշխատանքը, կօրհնեմ անոնց վաստակը, կօրհնեմ անոնց ջանքը, որպեսզի մեր ճամբան առաջանա ուղիղ և ապահով:

Մեր սիրտը բոլորովին հանդարտ չէ, հանդարտ չէր նաև Տեր-Զորի մեջ, երբ այնտեղ կիմանայինք մեր հայ եղբայրներուն և քույրերուն տառապանքը Գետաշենի մեջ, Ծահումյանի շրջանի մեջ, Արցախի նահանգի մեջ, Բերդաձորի, Մարտունաշենի և այլ շրջաններուն մեջ: Ես գիտեմ, որ այսօր ալ այդ տառապանքը կշարունակվի: Բայց այնքան ատեն, որ այս է մեր կյանքի դրվածքը, մենք կոչված ենք արթնության և զգաստության: Հայրենիքը խոսքով, զգացումով, բանաստեղծությամբ, հեռատորությամբ չի կառուցվիր: Հայրենիքը մեր քաջ որդվոց սուրբ արյամբը կազատվի, բայց ոչ միայն արյամբ, այլ խելքով, իմաստությամբ, ղեկավարման հեռատեսական, ամբողջատեսական կեցվածքով, առանց որուն արյունը չի բավեր: Աստված մի՛տք տված է մեզի, այս ճակատագրական օրերուն գիտնանք զգաստ ըլլալ և շարունակել այն ճամփան, որ կանգնած է մեր առաջ:

Սիրելիներ, իմ խոսքը կուզեմ Ավետարանի բառերովը ես այսօր կնքել: Օր մը գիշեր ատեն Հիսուս այցելու մը ունեցավ: Շատ քիչ մարդիկ հալածված Հիսուսին այցելություն կուտային: Օր մը Նիկոդեմոս իշխանը՝ հրեա ազգի ղեկավարներից մեկը, գիշեր ատեն գաղտնի գնաց Հիսուսի մոտ, և ըսավ իրեն. «Դուն Աստուծմե եկած ես, որովհետև դուն այնպիսի բաներ կընես, որ մարդը չի կարող ընել»: Հիսուս ըսավ իրեն. «Ոչ ոք կրնա երկընքի արքայությունը տեսնել, եթե վերստին չծնվի». Բայց իմաստուն Նիկոդեմոսը ըսավ Հիսուսին. «Մարդ ինչպե՞ս կրնա իր մոր որովայնի մեջ մտնել և վերստին ծնիլ, այդ անկարելի է»: Հիսուս ըսավ. «Դուն չես հասկնար: Ես սովորական ծնունդի մասին չէ, որ կխոսիմ: Ես կխոսիմ այն վերածնունդի մասին, առանց որու մարդ չի կրնար ըլլալ:

Վերածնունդը մարդու կյանքի հետ շաղախված է, մենք պետք է վերընտրեն ծնիլ սովորենք: Վերստին ծնիլ կնշանակե Աստուծո ներկայությունը մեր մեջ զգալ և անոր այդ հույսի Ավետարանը մեր կյանքի օրինագծին վերածել: Հոգևոր արժեքներուն, հոգևոր ճշմարտություններուն ավելի բարձր գնահատական տանք մեր կյանքին մեջ:

Սիրելիներ այդ հոգեկան վերածնության ավազանը, շարունակ հոսող գետը Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին է մեզ համար: Հոգևոր վերածնության համար օտար աղբյուրի պետք չունինք, որ մեզի գան և Ավետարան քարոզեն: Ավետարանի քարոզ են մեր մեկ ու կես միլիոն նահատակները:

Ես կիմանամ, թե ինչ տեսակ հոսանքներ, կրոնական նորանոր և մոլորեցուցիչ քարոզիչներ կու գան մեր երկիրը, անոնց պետք է ըսել՝ կարդացեք Ավետարանը, Հիսուս կըսե. «Գնացէք այսուհետև աշակերտեցէք զամենայն հեթանոսս»: Մենք հեթանոս չենք, մենք քրիստոնյա ենք: Գնացեք նրանց մոտ, ովքեր քրիստոնյա չեն, նրա՛նց քրիստոնյա դարձրեք: Դա է Հիսուսի պատվիրանը. Հիսուս Քրիստոս երբեք չէ հրահանգած, որ գնան քրիստոնյայի անունը փոխեն: Ոչ, նա հստակ ըսեր է «Աշակերտեցէք զամենայն հեթանոսս»:

Իմ նախորդներից Գարեգին Ա Հովսեփյան կաթողիկոսը, որ Ս. Էջմիածնի զավակ էր, գրել է, և հաճախ ասում էր մեզ, Աստուծո ամենամեծ պարգևը հայ ժողովուրդին՝ Հայաստանյայց Սուրբ Եկեղեցին է:

Մեր ժողովուրդի վերածնության առաջին պայմանն է՝ իր եկեղեցին իր կյանքին հետ շաղախել, իր եկեղեցին զգալ իր մեջ՝ իր կյանքին մեջ:

Սիրելիներ, ես կհավատամ, որ մեր ժողովուրդը Հայաստանի մեջ, թե Սփյուռքի մեջ կարողություն կունենա այս հոգևոր վերազարթոնքին ազգային նկարագիր տալ, որովհետև հոգևոր վերածնությունը ազգային վերածնությամբ կարժևորվի: Այս հայրենիքը վերաշինության պետք ունի, և դուք եք, իմ եղբայրներ և քույրեր, որ պիտի շինեք այս հայրենիքը:

Ես իմ խոսքը պիտի փակեմ այն խորհրդածությամբ, որ մենք, եթե կուզենք ամբողջական իմաստով պետություն դառնալ, անկախ պետություն դառնալ, Աստուծո տված ազատությունը կարգապահ, հավասարակշռված ձևով գործադրելու ենք, և ոչ թե մեկ վարչակարգից, որ անարդար էր, բռնակալ վիճակից դուրս գալով՝ անիշխանական վիճակին երթանք: Ոչ, պետություն ունենք, ուժ տանք այդ պետության, բոլորվինք անոր շուրջը, ուժեղացնենք պետությունը, որ մենք ուժեղանանք: Ո՞վ է պետությունը, դուրսեն նշանակված չէ, մենք ենք ընտրել: Կարողանանք ուժեղացնել մեր երկիրը, մեր հայրենիքը:

Սրտովին կաղոթեմ ու կմաղթեմ, որ Աստված իմաստության իր շնորհքն առատացնե մեր բոլոր հոգևոր, պետական և հասարակական պատասխանատվության կոչված անձերուն վրա:

Վեհափառ եղբայր, Հայ Եկեղեցվո միության և ամբողջականության այն ճանապարհը, որ միասնաբար բացինք, Ձեր իմաստությամբ պիտի ընթանա առաջ: Եվ ժողովուրդ հայոց, եթե ձեր ընտրած Վեհափառները միասին կքալեն, դուք ալ մտածեք՝ քալել միասին՝ մեկ եկեղեցվո նշանաբանով և աշխարհի մեջ պատիվ շահիլ, որովհետև ոչ մի օտար ազգ մեզ արժեք կընծայի, եթե մենք մեր մեջ պառակտված ենք: Ես տեսել եմ պառակտումի չարիքները, և խնդրում եմ ձեր բոլորից՝ այս միության տեսլականը երբեք չհեռացնեք ձեր աչքերից: Եվ կարենանք իբրև մեկ եկեղեցի, մեկ ազգ և մեկ հայրենիք ապրել, գործել՝ Աստուծո փառքին և մեր ազգին պատիվին համար, հավիտյանս հավիտենից. ամեն:

* * *

Դրբազան արարողությունից հետո, ի պատիվ Կիլիկյան Աթոռի պատվիրակության, Վեհարանում տեղի ունեցավ բարիգալստյան ճաշկերույթ:

Նույն օրը, երեկոյան ժամը 19.30-ին, Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի բակում, վերատեսուչ գերշ. Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանի նախաձեռնությամբ, կազմակերպվել էր համերգ՝ նվիրված հոգևոր ճեմարանի 1990—1991 թթ. ուսումնական տարվա փակման հանդիսությանը:

Գեղարվեստական մասում իրենց մասնակցությունը բերեցին Էջմիածին քաղաքի մշակույթի տան «Նավասարդ» երգչախումբը, Հայաստանի մանկական սիմֆոնիկ նվագախումբը և «Գթություն» բարեգործական միության երգեցիկ խումբը:

Այս գեղեցիկ միջոցառմանն իր օրհնությունը բերեց նաև Գարեգին Բ Հայրապետը: Նա բարձր գնահատեց տեսչության աշխատանքը և հույս հայտնեց, որ մոտ ապագայում թե՛ Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի սաների և թե՛ Անթիլիասի դպրեվանքի աշակերտների փոխադարձ այցելություններ-



ԿՈՉԱՅՈՒՄՆԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ՎԱՆՈՒՄ ՀԱՅԱԶՆ

ով ավելի սերտ հարաբերություններ կստեղծվեն այդ երկու կրթօջախների միջև:

ՀՈՒՆԻՍԻ 10

Այսօր Ամենայն Հայոց Վազգեն Ա Հայրապետը և Մեծի Տանն Կիլիկիո Գարեգին Բ Կաթողիկոսը, շրջապատված հոգևորականաց դասով, խաչակիր ծաղկեպսակ զետեղեցին Ծիծեռնակաբերդի Նահատակաց հուշարձանին:

Մեծ Եղեռնի զոհերի հիշատակին, Ամենայն Հայոց Վեհափառի նախագահությամբ, կատարվեց հոգեհանգստյան հանդիսավոր արարողություն:

Հոգեհանգստյան պաշտոնից հետո, երկու Հայրապետները պատասխանեցին լրագրողների հարցերին:

ՀՈՒՆԻՍԻ 11

Գարեգին Բ Կաթողիկոսն իր շքախմբով այցելեց աղետի գոտի: 1988 թ. դեկտեմբերյան ահավոր երկրաշարժից հետո, սա Նորին Սրբության երրորդ այցելությունն էր:

Կիլիկյան Աթոռի Գահակալը եղավ Կումայրիի նորակառույց բնակելի թաղամասերում: Ուխտավոր Հայրապետն ամենուր բաշխում էր իր օրհնությունն ու մխիթարական ջերմ խոսքեր ասում վշտակիր ժողովրդին: Կումայրիի Ս. Աստվածածին եկեղեցում, Գարեգին Բ Կաթողիկոսի նախագահությամբ, հոգեհանգստյան հանդիսավոր պաշտոն կատարվեց՝ ի հիշատակ երկրաշարժի բյուրավոր նահատակների: Նա իր շքախմբով եղավ նաև մի քանի գյուղերում, ապա ուղևորվեց Սպիտակ, այնտեղ ևս մխիթարելու աղետյալ ժողովրդին և պատմելու Տեր-Զորի «Սրբոց նահատակաց» եկեղեցու օծման հանդիսավոր արարողության մասին:

ՀՈՒՆԻՍԻ 13

Ամենայն Հայոց Հայրապետը և Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսը, բարձրաստիճան հոգևորականների ուղեկցությամբ, այցելեցին Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի նախագահ Տիար Լևոն Տեր-Պետրոսյանին:

Պարոն նախագահը երկու Հայրապետներին ներկայացրեց հայրենի իշխանության կողմից կատարվող աշխատանքների ու նորանոր ծրագրերի մասին: Նա բարձր գնահատեց Հայ Առաքելական Եկեղեցու դերն ու առաքելությունը ինչպես անցյալում, այնպես էլ ներկա՝ մեր հանրապետության համար դժվարին ժամանակներում:

Ապա Գարեգին Բ Կաթողիկոսը պատմեց դեպի Տեր-Զոր կատարած իր ուխտագնացության մասին: Նա գովասանքի ջերմ խոսքեր ասաց նաև Հայաստանի իշխանությունների կատարած հայրենանվեր աշխատանքների վերաբերյալ և հույս հայտնեց դեպի անկախություն գնացող Մայր Հայրենիքի վաղվա ապագայի նկատմամբ:

Նույն օրը Գարեգին Բ Կաթողիկոսն իր շքախմբով ուխտագնացության ուղևորվեց դեպի Ս. Գեղարդա վանք: «Հրաշափառ»-ի երգեցողությամբ Մեծի Տանն Կիլիկիո Հայրապետը մուտք գործեց վանք, որտեղ հավաքվել էր ուխտավորների հոծ բազմություն:

Վանահայր Տ. Եղիշե ավ. քհն. Սարգսյանի բարիգալստյան խոսքից հետո, Նորին Սրբությունը հավատացյալ հայորդիներին բաշխեց իր օրհնությունը:

ՀՈՒՆԻՍԻ 14

Գարեգին Բ Վեհափառն այցելեց Մատենադարան, որտեղ հանդիպում ունեցավ գիտության այդ կաճառի անվանի գիտնականների հետ: Մատենադարանի տնօրեն Տիար Սեն Արևշատյանը Վեհափառին ծանոթացրեց նոր ստացված ձեռագրերի և նոր թափ ստացած կրոնական գրականության ուսումնասիրության աշխատանքներին:

Նույն օրը, երեկոյան, Վեհարանի ընդունարանում, Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսն ընդունեց և իր օրհնությունը բաշխեց Ս. Խոր Վիրապ վանքի «Հայ եկեղեցասեր երիտասարդաց միության» անդամներին: Նորին Սրբությունը գոհունակություն հայտնեց Մայր Հայրենիքում հոգևոր վերածննդյան ու վերազարթոնքի շնչով ընթացող երիտասարդության ազգային բարձր գիտակցության ու իրենց հայրերի ավանդություններին նոր կյանք տալու կապակցությամբ:

ԿԻՐԱԿԻ, ՀՈՒՆԻՍԻ 16

Վաղ առավոտից հավատացյալների խուռներամ բազմությունը, Երևանի Ս. Սարգիս եկեղեցում, սպասում էր սրբազան պատարագին: Պատարագիչն էր Գարեգին Բ Կաթողիկոսին ընկերակցող Զարեհ եպս. Ազնավորյանը: Սրբազան հոր սքանչելի ձայնը, ներդաշնակվելով ս. պատարագի հոգեհույզ երգեցողությանը, առավել շուք ու գեղեցկություն էր հաղորդում սրբազան խորհրդին:

Քարոզի պահին Մեծի Տանն Կիլիկիո Հայրապետը, բարձրանալով Ս. Խորան, իր հայրական խոսքն ուղղեց հավատավոր հայորդիներին: Նա պատմեց Տեր-Զոր Կատարած ուխտագնացության մասին, հորդորեց հայ ժողովրդի զավակներին, որ ներշնչվեն Տեր-Զորի անապատում վեր խոյացած «Սրբոց նահատակաց» գեղեցկագույն եկեղեցու աղոթքներով ու ոգեկանությամբ: Նորին Սրբությունը կոչ արեց նաև՝ հավաքվել հայրենի իշխանությունների շուրջ և միասնաբար կերտել մեր ազգի ու եկեղեցու նոր ապագան:

Հավարտ ս. պատարագի, Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ գերշ. Տ. Գարեգին եպս. Ներսիսյանը, ի պատիվ Կիլիկյան Աթոռի պատվիրակության, պաշտոնական ճաշկերույթ տվեց, որն անցավ ջերմ մթնոլորտում:

ՀՈՒՆԻՍԻ 17

Առավոտյան ժամը 10-ին Մեծի Տանն Կիլիկիո Գարեգին Բ Կաթողիկոսը իր շքախմբով, ուղեկցությամբ Սյունյաց թեմի առաջնորդ գերշ. Տ. Ասողիկ եպս. Արիստակեսյանի, ուխտագնացության ուղևորվեց դեպի Սյունյաց աշխարհի գեղատեսիլ ու վեհակերտ վանքերն ու եկեղեցիները:

Ուխտագնացության առաջին հանգրվանը կայացավ Պարույր Սևակի հուշաքարի մոտ, ուր Արարատի շրջանի իշխանությունները՝ գլխավորությամբ շրջխորհրդի նախագահի, բարի գալուստ մաղթեցին բարձրաստիճան հյուրերին: Տեղի ունեցավ ավանդական աղ ու հացի օրհնություն: Ապա Գարեգին Բ Վեհափառը «Հոգւոց» արտասանեց Մեծ բանաստեղծի հուշաքարի առջև:

Հետո ճանապարհը շարունակվեց մինչև Պարույր Սևակի հայրական օջախ, որտեղ Հայաստանից և Սփյուռքից ժամանած հայորդիներ, թախիծն ու խռովքն աչքերին, ուխտի էին եկել Սևակի գերեզմանին:

Հոբելյանական էր այս տարին, քանզի լրանում էր բանաստեղծի ողբերգական մահվան քսանամյակը:

Նորին Սրբության նախագահությամբ, հոգեհանգստյան հանդիսավոր պաշտոն կատարվեց վաղամեռ բանաստեղծի գերեզմանի վրա: Այս հոգեհույզ ու արտառուչ արարողության ավարտին Գարեգին Բ Կաթողիկոսը, մխիթարելով ներկաներին, ոգեշունչ քարոզ խոսեց:

ՀՈՒՆԻՍԻ 18

Առավոտյան ժամը 10.30-ին ուխտագնացությունը շարունակվեց դեպի Տաթև: «Սատանայի կամրջի» մոտ, Տաթևի ձորում, Գարեգին Բ Կաթողիկոսը կանգ առավ և մեկ անգամ ևս հրապուրվեց Սյունյաց աշխարհի անձեռակերտ գեղեցկությամբ: Հեռվում, ձորի բերանին, Տաթևի հոչակավոր վանքն է: Տեղ հասնելուն պես, Նորին Սրբության նախագահությամբ, հոգեհանգստյան պաշտոն կատարվեց Եռամեծար վարդապետի՝ Գրիգոր Տաթևացու դամբարանին:

Սյունյաց թեմի առաջնորդ գերշ. Տ. Ասողիկ եպս. Արիստակեսյանը բարձրաստիճան հյուրերին ծանոթացրեց Տաթևի վանքի վերակառուցողական աշխատանքներին և հույս հայտնեց, որ մոտ ապագայում Տաթևի վանքը կունենա իր նախկին շքեղ ու փառավոր տեսքը:

Տաթևից ուխտավորները ուղևորվեցին Գորիս: Գորիսի շրջանի սահմանագլխին, հայոց հոգևոր հայրերին դիմավորեցին շրջանի ղեկավարության ներկայացուցիչները և ազգային տարազ հագած հայորդիներ: Կատարվեց ավանդական աղ ու հացի օրհնություն:

Մեծի Տանն Կիլիկիո Հայրապետը նաև առաքելություն ուներ՝ հանդիպելու Խնձորեսկում ապաստանած Հադրութցի փախստականներին: Նորին Սրբությունը, ծանոթանալով դեպքերին ու իրադարձություններին, իր օրհնությունն ու մխիթարությունը բաշխեց արտաբեկ ու վշտահար ժողովրդին:

Այնուհետև, Վեհափառ Հայրապետը Գորիս քաղաքի հրապարակում հանդիպեց ժողովրդի հետ և իր Հայրական հորդորն ու պատգամը հղեց նրանց:

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ Гос. Библиотека ՀԱՍՀ-Арм.ССР

Այս բացառիկ առիթով Գորիսի ղեկավար անձինք Կիլիկյան Աթոռից ժամանած ուխտավորների պատվին ճաշկերույթ կազմակերպեցին:

Ապա ուխտագնացությունը շարունակվեց դեպի Սիսիան: Սիսիանի սահմանագլխին Վեհափառ Կաթողիկոսին դիմավորելու էին եկել քաղաքային իշխանության մարմինները՝ գլխավորությամբ շրջանի ղեկավար Տիար Մայիս Պողոսյանի և տեղի հոգևոր հովիվ Տ. Առաքել աբեղ. Քարամյանի: Բարիգալստյան ջերմ խոսքերի փոխանակումից հետո, ճանապարհը շարունակվեց մինչև Սիսիանի Ս. Հովհաննես եկեղեցի, որի շուրջը հավաքվել և խանդավառությամբ ուխտավոր Հայրապետին էին սպասում բազմաթիվ հավատավոր ու հավատարիմ հայորդիներ:

Եկեղեցական թափորով և «Հրաշափառ»-ի գեղեցիկ երգեցողությամբ Մեծի Տանն Կիլիկիո Հայրապետը մուտք գործեց Սյունյաց աշխարհի հնամենի ու աղոթաշատ այս եկեղեցին:

Սյունյաց թեմի առաջնորդ Ասողիկ սրբազանի ողջույնի խոսքից հետո, հավատացյալ բազմությանն իր հայրական պատգամը տվեց Գարեգին Բ Հայրապետը.

«Սիրելիներ, կրոնական այն նոր շունչը, որ փչում է մեր ազգի կյանքի մեջ, առողջության, հոգևոր ու ազգային առողջության գաղտնի ուժ մը ունի իր մեջ: Ով կբացվի իր շունչին, ով կտանա Քրիստոսի Ս. Հավատքը, նա կդառնա քաջ, արի, մահվան դիմաց անվախ: Այդպես է պատգամը մեր հայրերի:

Մեր Տերը՝ Հիսուս Քրիստոս, Աստուծո Որդին, Կատարյալը, հալածվեց, սեր քարոզեց, խաղաղություն քարոզեց, ինքզինք անգամ խաչի ենթարկեց: Մարդիկ հալածեցին զինք, բայց նա հաղթեց:

Ով խաչին կհավատա՝ նա կհաղթի, որովհետև խաչը զոհողության խորհրդանիշ է: Դուք պիտի գիտենաք ձեր կողմից, ձեր ունեցածից բաժին հանել Աստծուն, եկեղեցուն, ազգին և հայրենիքին: Եթե մենք չտանք մեր ազգին մեր խելքից, մեր ուժից, մեր ժամանակից, հապա ազգն ինչ կլինի: Մենք պետք է այս գիտակցության գանք:

Եղբայրներ, կարող է մյուս բոլոր ասածներս մոռնաք, խնդրում եմ այս վերջին խոսքս չմոռնաք. դադարենք ժողովուրդ միայն լինելուց, դառնանք ազգ, պետականորեն կառավարվիլ գիտցող ազգ: Ժողովուրդն ամբոխ է, ժողովուրդը բազմություն է, ազգը մի կառույց է, ազգը մի համադրյալ կյանք է»:

Հոգեհույզ հանդիպումից հետո, Սիսիանի շրջանային ղեկավարությունը հյուրերին ուղեկցեց հանգստի վայր, որտեղ ի պատիվ Գարեգին Բ Վեհափառի ճաշկերույթ տրվեց:

Ուշ երեկոյան Նորին Սրբությունն իր շքախմբով վերադարձավ Ջերմուկ:

Հաջորդ առավոտյան, հունիսի 19-ին, հրաժեշտ տալով Ջերմուկի հյուրասեր ժողովրդին և նրա հարգարժան ղեկավարությանը, ուխտավոր Կաթողիկոսը վերադարձավ Մայր Աթոռ Ս. Էջմիածին:

ՀՈՒՆԻՍԻ 20

Գարեգին Բ Հայրապետն իր շքախմբով այցելեց Գուգարաց թեմ: Նորին Սրբությանն ընկերակցում էր նաև Մայր Աթոռի դիվանապետ գերշ. Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը:

Դիլիջանի հոչակավոր Հաղարծին վանքի դարպասների մոտ բարձրաստիճան հոգևորականությանը դիմավորեց Գուգարաց թեմի հոգևոր դասը՝ գլխավորությամբ թեմական առաջնորդ գերշ. Տ. Արսեն եպս. Բերբերյանի: «Հրաշափառ»-ի երգեցողությամբ եկեղեցական թափորը Կիլիկյան Աթոռի Գահակալին առաջնորդեց վանք, ուր ուխտավոր Հայրապետին էր սպասում հավատացյալների խուռներամ բազմությունը: Նորին Սրբությունը դիմելով հավատավոր հայորդիներին, ոգեշունչ քարոզ խոսեց: Իր խոսքում Վեհափառ Հայրապետը վեր հանեց Հաղարծին վանքի փառավոր պատմությունը, ապա հանգամանալից անդրադարձավ դեպի Տեր-Զոր կատարած համազգային ուխտագնացությանը:

Թեմական առաջնորդը, ի պատիվ Կիլիկիո Կաթողիկոսի, ճաշկերույթ տվեց:

ՀՈՒՆԻՍԻ 21

Անհավասիկ իր ավարտին հասավ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսի երկշաբաթյա ուխտագնացությունը ի Հայաստան: Ամենայն Հայոց Վազգեն Ա. Հայրապետը, ի նշան ջերմ բարեկամության ու համագործակցության, Վեհարանում ողջերթի ճաշկերույթ էր կազմակերպել: Ճաշկերույթին ներկա էին Մայր Աթոռի միաբանությունը, ազգային-հասարակական գործիչներ Մայր Հայրենիքից և Սփյուռքից:

Կենացներ առաջարկվեցին ինքնիշխան Հայաստանի լուսավոր ապագայի, Հայրապետական երկու Աթոռների միակամության և զույգ Հայրապետների արևշատության համար: Խոսք առնելով, Գարեգին Բ Կաթողիկոսը երախտագիտություն հայտնեց Նորին Սուրբ Օծություն Տեր Տեր Վազգեն Ա Հայրապետին, այս եղբայրական ու հոգատար վերաբերմունքի համար:

Իր հերթին Ամենայն Հայոց Կաթողիկոսը, բարեմաղթանքի սրտառուչ խոսքեր ասաց Կիլիկյան Աթոռի Գահակալին ու նրա շքախմբի անդամներին և կոչ արեց՝ համատեղ ու միասնական գործունեություն ծավալել հայ ժողովրդի կրոնական-հասարակական կյանքի բարելավման ուղղությամբ:

Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսանիստ Անթիլիաս վերադարձին Գարեգին Բ Կաթողիկոսը ոգեշունչ քարոզ խոսեց Անթիլիասի Մայր տաճարում, Լիբանանի հավատացյալ հայ ժողովրդին հաղորդելով իր հայրենական տպավորությունները, հաստատելով հայրենի ժողովրդի վճռականությունը տնօրինելու իր Հայրենիքի անկախությունը:

ԷԴՎԱՐԴ ՍՐԿ. ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ